Հավելված N 2
2026 թվականի փետրվարի 5-ին կնքված
1032-11003/26-ԱՇՑ12 պայմանագրի

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 12. Շիրակ 3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 -30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.07.22
15:21:12 AMT

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուշադրության կենտրոնացման, մենթալ ֆունկցիաների ակտիվության պահպանման, ստեղծագործական եւ վերլուծական մտածողության աջակցման, հույզերի բացահայտման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝ գեղարվեստ, առողջ ապրելակերպ, հոգեբանական, արտ-թերապիա, մամուլի ընթերցում, հմուտ ձեռքեր, որոնց մասնակցել են թվով 20 շահառուներ:
  Կազմակերպվել է թվով 6 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել են թվով 36 շահառուներ: Իրականացված միջոցառումներն են՝ Սուրբ Հարության տոն,Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Համբարձման տոն, Հանրապետության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Տարեցների նկատմամբ բռնության իրազեկման համաշխարհային օր:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 3 հանդիպում՝ ուղղված շահառուների մանր մոտորիկայի ակտիվացմանը, հիշողության զարգացմանը, մենթալ ֆունկցիաների ակտիվության պահպանմանը, ստեղծագործական եւ վերլուծական մտածողության աջակցմանը, հույզերի բացահայտմանը, մասնակիցների թիվը՝ 17:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- «Սուրբ Զատիկ» միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամամբ՝ https://goo.su/g8AYd97),
- «Հայոց ցեղասպանության զոհերի միջազգային օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամամբ՝ https://goo.su/OpzwS1U),
- Առողջ ապրելակերպի խմբակի պարապմունքը Արթիկի քաղաքային ստադիոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/ihqdU),
- Արտթերապիայի խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/Unuhn),
- Համբարձման տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/wHjvp),
- Երեխաների պաշտպանության օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://goo.su/HAoMZGB):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Արթիկի ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել ցանկացող անձինք ուղեգրման համար անհրաժեշտ բժշկական քարտի՝ թմրաբանի և աղիքային խմբի վարակիչ (այդ թվում՝ մակաբուծային) հիվանդությունների հարուցիչների նկատմամբ հետազոտություններն անցնելու համար պետք է այցելեն Գյումրու պոլիկլինիկա՝ Արթիկում համապատասխան հետազոտությունների բացակայության պատճառով, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում շահառուների համար և բարդացնում է ուղեգրման գործընթացը:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողը, բուժքույրը և ցերեկային կենտրոնի պատասխանատուն մասնակցել են.

- Հոգեբույժ Գ. Փաշիկյանի վարած՝ «Հոգեկան առողջություն» թեմայով առցանց հանդիպմանը:
- «Փախստականների և ընդունող համայնքների հզորացում աշխատաշուկայում, մրցունակության բարձրացում և ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար» ծրագրի շրջանակներում Գյումրիում անցկացված «Սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխարգելում և վարքագծի կանոնագիրք» թեմայով դասընթացին:

- ✓ Սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾ Արթիկի տարածքային կենտրոնում իրականացված համակարգող խորհրդի նիստին (3 անգամ):
- ✓ Սոցիալական աշխատողը մասնակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Շահառուի աջակցության փաստաթղթավորում»

թեմայով հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են ծնաթղթերի ու հարցաթերթերի կիրառելիությունը և այդ մասով անհրաժեշտ հմտությունները:

Չևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/40 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | - |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 33 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 17 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 5.1 | Գեղարվեստ | 20 |
| 5.2 | Առողջ ապրելակերպ | 17 |
| 5.3 | Մամուլի ընթերցում | 17 |
| 5.4 | Հմուտ ձեռքեր | 17 |
| 5.5 | Արտ-թերապիա | 18 |
| 5.6 | Հոգեբանական | 18 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 36 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 20 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07. 2026թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)